19 նոյեմբերի 2018 թ.
Ժամը 11:00 թիվ՝ 3

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/58 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
հանձնաժողովի անդամներ
/դեղագործ/ Ս. Անանյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետ՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահ Ն. Գասպարյան

1. Ընդունել ի գիտություն որ՝

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Օհանյանը համաձայն՝ ՀՀ կառավարության 14 մայիսի 2017 թվականի թիվ 534-Ն որոշման 1-ին կետով հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգ»-ի /այսուհետ՝ Կարգ/ 19-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.10-րդ կետի պահանջներին կատարել է հարցում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և <<ֆինանսայն միջոցներ>> որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ:

Կոմիտեն կատարված հարցման վերաբերյալ սահմանված ժամկետում տրամադրել է եզրակացություն: Համաձայն տրամադրված եզրակացության մասնակիցները չունեն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը գերազանցող հարկային պարտավորություններ:

2. <<Գեղամ Կիրակոսյան>> ՍՊԸ-ին 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաճելու մասին որոշումը դադարեցնելու, Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ի հայտը 3-րդ չափաբաժնի մասով մերժելու, Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ին 7-րդ իսկ Հայկ Ֆարմ ՍՊԸ-ին 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին.

2.1. <<Գեղամ Կիրակոսյան>> ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/ Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը: Ընկերությունը ներկայացված ապրանքների անվանումներին և տեխնիկական բնութագրերին կից ներկայացրել է նաև գրություն: Գրությամբ Ընկերությունը հայտնել է.

ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/58 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների համար Ընկերությունը ներկայացրել է գնային առաջարկներ: Սակայն Գնային առաջարկները Ընկերությունը սխալմամբ ներկայացրել է ոչ թե պայմանագրի կատարման համար առաջարկվող գնման առարկաների ընդհանուր քանակի համար, այլ ներկայացրել է գնման առարկաների մեկ միավորի գնով: Այսինքն գնային առաջարկում նշվել է գնման առարկայի մեկ միվորի գինը: Նշված վրիպումը ըստ Ընկերության պայմանավորված է նրանով, որ Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ն առաջին անգամ է մասնակցում էլեկտրոնային աճուրդին և բավարար չափով դեռ չի տիրապետում այդ էլեկտրոնային համակարգին:

Ընկերությունը գրությամբ խնդրել է՝ հնարավորության դեպքում ղեկավարվել ՀՀ Կառավարության

2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 31-րդ կետի 2-րդ, 8-րդ ենթակետերով և 41-րդ կետի 4-րդ ենթակետով ու մերժել Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ի հայտը:

2.2 Հաշվի առնելով Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ի վերը նշված գրությունը և ներկայացրած գնային առաջարկը գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի. <<1. (...): Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:>>,

համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝

<<40. Հայտերի բացման նիստում՝

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում (...) գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը (...) ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:>>,

համաձայն սույն գնման ընթացակարգի հրավերի՝

5.2-րդ կետի. <<5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ (...)>>

7.4-րդ կետի. <<Աճուրդի ընթացքում (...): (...) գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որը հաշվարկվում է քանակ x միավորի գին բանաձևով:>>:

Վերը նշված նորմերից հետևում, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին ապա մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա է մերժման:

Իսկ գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած գնային առաջարկը ըստ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին հարկավոր է ներկայացնել պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որի բանաձևը հետևյալն է՝ **գնման առարկայի քանակ x մասնակցի առաջարկված գնման առարկայի միավորի գին**: Հետևաբար եթե մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը կազմել և ներկայացրել է նշված բանաձևի խախտմամբ ապա այն գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվի անբավարար:

Այսինքն, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակիցը գնային առաջարկը ներկայացնի գնման առարկայի միավորի գնի համար, ապա գնահատող հանձնաժողովը այն պետք է գնահատի որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժի:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ն 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկը ներկայացրել է միավորի գնով, գանահատող հանձնաժողովը որոշեց՝

- *դադարեցնել Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ին 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճաչելու մասին որոշումը,*
- *մերժել Գեղամ Կիրակոսյան ՍՊԸ-ի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով ներկայացրած հայտը,*
- *7-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ին,*
- *4-րդ և 5-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Հայկ Ֆարմ ՍՊԸ-ին և*
- *<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:*

2.3 Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով, ծանուցվել է՝ Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը նույն ենթակետով սահմանված ժամկետում ներկայացնելու մասին: Սակայն Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը չի ներկայացրել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- *Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրած հայտը մերժել և*

□ 3-րդ չափաբաժնի մասով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացնել Հայկ Ֆարմ ՍՊԸ-ին, որպես 3-րդ չափաբաժնի մասով հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից:

3. Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և Հայկ Ֆարմ ՍՊԸ-ին 3-րդ 4-րդ և 5-րդ չափաբաժինների իսկ Էյ Բի Սի Ֆարմացիա ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնի մասով, eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը:

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Կարգի 22-րդ կետով սահմանված ժամկետներում:

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան

հանձնաժողովի անդամներ
/դեղագործ/ Ս. Անանյան

/հաշվապահ/ Ն. Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան